## Ո՞Վ ԵՆՔ ՄԵՆՔ

Մեր առաքելությունն է՝ համախմբել սահմանաբնակ և գյուղական համայնքներում բնակվող երիտասարդներին և զարգացնել նրանց կարողությունները հանուն կայուն խաղաղության:
Մեր տեսլականն է հասնել կայուն խաղաղություն և ունենալ ակտիվ համայնք, որտեղ սահմանաբնակ երիտասարդները ներգրավված են որոշումների կայացման՝ պետական և հասարակական գործընթացներում: Մենք ձգտում ենք ստեղծել հնարավորություններ, զարգացնել համագործակցության մեխանիզմներ, կազմակերպել տարաբնույթ դասընթացներ, մենթորություն երիտասարդների համար: Մենք նպաստում ենք սահմանային համայնքներում և հասարակական կյանքում դրական փոփոխություններին, որոնք միտված են բարելավելու երիտասարդների և կանանց՝ հասարակական կյանքում ինտեգրմանը և ակտիվիզմին:

Մեր արժեքներն են՝
- իրավահավասարություն
- բնապահպանություն
- խաղաղություն

Աշխատանքային արժեքներ՝
- ներառականություն
- մասնակցայնություն
- հզորացում

Մենք բաց ենք բոլոր այն անհատների և կազմակերպությունների համար, ովքեր/որոնք կիսում են մեր արժեքները:

## Ի՞ՆՉ ԵՆՔ ՄԵՆՔ ԱՆՈՒՄ

Գործողությունների, մեթոդների, մոտեցումների, գործիքների և առաջնահերթությունների բազմազանությունը Սահմանաբնակ երիտասարդների՝ համայնքային երիտասարդությանը հզորացնելու կարևորագույն տարրերն են: Ներկայիս միջոցառումները ընդգրկում են՝
- Համայանքային ակտիվիզմ (երիտասարդական կենտրոն, քայլարշավներ, շրջայցեր)
- Ոչ ֆորմալ կրթություն (դասընթաց, սեմինար, քննարկում, կինոդիտում և այլն)
- Խաղաղության ցուցահանդեսներ
- Յոգա հանդիպումներ
- ՍերմանելOFF ՓոփոխությON ամառային դպրոց
- Խիստ աղջկական զրույցներ
- Մեդիա արշավներ
- Խաղաղության կրթություն և ջատագովություն
- Համագործակցություն և ցանցայնություն

## WHO ARE WE?

FYN mission is to connect and empower young people living in frontline communities to develop their potential and skills to foster sustainable peace.
FYN vision is to reach sustainable peace and have active communities where women and youth are involved in decision-making. We strive to create opportunities, develop cooperation mechanisms, organize various training, mentorship for young people to promote positive changes in bordering communities and social life.

FYN values are
- human rights
- green
- peace

FYN working values are:
- inclusion
- participation
- empowerment

FYN is open to partnering with individuals and organizations that share our values.

## WHAT WE DO?

Diversity in the activities, methods, approaches, tools and priorities is a key element for FYN in its work of empowering youth in their communities. The current public event methods of topical deliverables are as follows:
- Civic activism and youth activism (youth hubs, campaigns, marches, etc.)
- Non-formal education (training, seminars, discussions, movies-screenings, etc.)
- Peace exhibits
- Yoga classes
- ՍերմանելOFF ՓոփոխությON (Seed the Change) Summer school
- Girls talks on SRHR
- Media campaigns
- Peace education and advocacy
- Networking

## ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Թիմային աշխատանքը, համագործակցությունը և թափանցիկությունը Սահմանաբնակ երիտասարդների աշխատանքի բնորոշիչներն են, որով կազմակերպության կառուցվածքը սահմանվում է հորիզոնական: Կազմակերպությունը բաղկացած է երեք հիմնական մարմիններից՝

- Օֆիս (աշխատակազմ)
- Գործադիր կոմիտե (խորհրդատու)
- Աշխատանքային խմբեր (կամավոր, աջակից)

## STRUCTURE

Teamwork, collaboration, and transparency are the hallmarks of Frontline Youth Network, thus making the organizational structure horizontal. There are three main bodies in the structure that share common resources and make input accordingly.

- Office (staff)
- Executive Committee (consultants)
- Working groups (volunteers, supporters)

## ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ / CONTACTS

- Տեղեկատվության համար / General inquiries
  **info@frontlineyouth.net**
- Թիմին միանալու համար / Joining the team
  **touch@frontlineyouth.net**
- Ադմինիստրատիվ հարցերի համար / Administrative
  **office@frontlineyouth.net**
- Ծրագրային, բովանդակային հարցերի համար / Content-wise
  **projects@frontlineyouth.net**

«Սահմանաբնակ երիտասարդների ներուժի բացահայտում» հասարակական կազմակերպությունը հիմնվում է խաղաղաշինական, մարդու իրավունքների գերակայության և կանաչական գաղափարախոսությունների վրա:

---

Frontline Youth Network is based on peacebuilding, human rights and green ideologies.

**Frontline**
**Youth**
**Network**